

կեանքի նորոգութեանը, նրա բարեկեցութեան ամրացմանը և պետական կարգի կատարելագործութեանը: Ապա, ի մասնաւորի, կովկասեան երկրի վերաբերմամբ, մարտի 1-ին Կովկասի փոխարքայի անունով տրված բեականդուտի մէջ արտայայտված է, թէ հոգաւոր երկրի մէջ խաղաղութեան, բարեկեցութեան և կարգի զարգացման մասին Ռուսաստանի միւս մասերի հետ սերտ միութեան հիմունքներ վրա—անհրաժեշտ է համարվում անյապաղ հաստատել Կովկասում անդրբլոքային, որպէս զի այդ երկրները հարգումով անկի ներքին շինարար աշխատութեան և յայտ է յայտնվում, որ այդ նպատակները իրագործման համար Կովկասի ազգաբնակչութեան բոլոր դասակարգերը և ազգերի խելահաս անձինք ցոյց կը տան իրանց միահամուռ գործակցութիւնը: Այդ բոլոր պայմաններով հաղիւ թէ կարողանան լինել լուրջ հիմունքներ յուզելից երկրի իսկ մասը, թէ այդ մեծ կոչին՝ պետական աշխատութեան համար արձագանք տալու ընդունակ չի համարվի և մեր բազմազան ազգաբնակչութիւնը և թէ չը նայելով Բարձրագոյն մանիֆէստներին, մեզ մօտ դեռ երկար կը պահանջվին հին կարգերը, նրանց անխուսափելի կերպով ուղեկցող ուժեղացած հսկողութեան և պատերազմական դրութեան հետեւանքներովը:

Բայց և այնպէս Կովկասի վերաբերութեամբ գործադրել բացառիկ օրէնքներ և զրկել նրան մինչև այժմ այնպիսի հիմնարկութիւններէ, որոնցով վաղուց օժտված են Ռուսաստանի ներքին նահանգները, ամբողջ տեղական հասարակութեան վրա պարտք է դնում բարձր իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրել այն բանի վրա, որ միայն երկրի իրաւունքները լիակատար և շուտափոյթ միաւորացումը մը—նացած ամբողջ Ռուսաստանի հետ, մանաւանդ նրա կարգերի առաջիկայ բարեխառնը նկատի առնելով,—ընդունակ է խաղաղութիւն մտցնել մեր կեանքի մէջ և բարձրացնել մեր ազգաբնակչութեան ոգին՝ յոյս ներշնչելով նրա մէջ դէպի մօտակայ բեղմնաւոր ընդհանուր բարեփոխումները: Ըստ երկուսի հասել է ժամանակը, յանուն տուած երդումի սրբազան պարտականութեան, ամենահպատակօրէն ներկայացնելու Թագաւոր Կայսրին, որ մեր խաղաղ ազգաբնակչութեան կեանքը պղտորվեց վերջին ժամանակներս ընդհանուր հանգստութիւնը վերգոյծ խառնակութիւններով: Ազգաբնակչութեան մէջ խախտվել է հաւատը դէպի օրէնքի ոյժն ու ախտախելութիւնը. օր օրի վրա քանդվում է վստահութիւնը դէպի անձի և գոյքի ապահովութիւնը, և հասարակական անկարգաւորութեան տխուր դոճերը սպառնում են ազգաբնակչութեանը լուրջ կերպով լքանել հոգեպէս և նիւթապէս: Այժմ աւելի քան երբ և է մեր դեւերմբնող ազգաբնակչութեանը հարկաւոր է գիտակցութիւն, որ իր իրաւունքները համար արտասանված գաղտնի և արդար խօսքը չի խելովել, հարկաւոր է գիտակցութիւն, որ ինքն էլ կազմակերպված և օրինական ձևով մասնակցում է թէ կովկասեան հարցերի լուծման և թէ համապետական կարգաւորման խնդիրները մէջ: Միայն այդպիսի պատասխանատու գիտակցութիւնը կը վերադարձնէ ազգաբնակչութեանը հանգստութիւն և խաղաղութիւն, միայն Ռուսաստանի մնացած մասերի հետ հաւասար մասնակցութիւնը տեղական և պետական կարգերը կատարելագործելու աշխատանքի մէջ կարող է ազգաբնակչութեանը ոգու արթնութիւն և հաստատուն վստահութիւն ներշնչել իր հոգեկան ապագայ ազատութեան և նիւթական ապահովութեան վերաբերութեամբ:

Այդ վերագրեալի հիման նրա թիֆլիսի բաղադրյալ ղեկավար պետական և անյապաղ միջնորդէր, որ Կովկասի ազգաբնակչութեան ներկայացուցիչներին այժմ և եթ թոյլատրվէր մասնակցելու ներքին գործերի միջնորդին նախագահութեամբ կազմված յատուկ խորհրդին, որի վրա փետրվարի 18 ի Բարձրագոյն ընկերակազմի ղեկավար և որոնք ճանաչաւարներ իրական կանանցնելու նոյն ընկերակազմի մէջ արտայայտված Բարձրագոյն կամքը:

ՆԱ ՉԻ ՄՈՒՆԱՅԿԻ

Ման իմացել անմահութիւն է...

Երկրէ:

Կան հասարակական կրթութեանը, որոնք անդառնալի են, անփոխարինելի, բայց մի և Բագուի աղէտը, անկասկած, առաջին կարգի

նոյն ժամանակ անշնչելի ու անմոռանալի իրանց թողած հետքերով, իրանց նշանակութեամբ:

Այդ շարքին են պատկանում այն անհատները, այն հասարակական գործիչները մահը, որոնք իրանց կեանքում ծառայել են բարձր գաղափարի, դաւանել ու արժանացել են վեհ սկզբունքներ՝ ժողովրդի, ընդհանրութեան շահերը պաշտպանող սկզբունքներ:

Մեռնում են անհատները, բայց կենդանի են մնում գաղափարները. անհատներն են գործիչները, բայց հրապարակի վրա դեռ երկար նկատվում են նրանց կատարած գործերը, նրանց թողած ազդեցութիւնը, եթէ միայն նրանք եղել են անկեղծ ու անձնազոհ, եռանդուն ու բեղմնաւոր:

Այն, չեն մոռացվում այն հասարակական ու գիտական գործիչները, որոնք իրանց կեանքն ու հանգստութիւնը նուիրել են ընդհանրութեան շահերին, որոնք անձնազոհութեամբ գործել են իբրեւ գաղափարի գինւոր:

Ան աղ տեսակ գաղափարական մի գինւոր էր նաև Գրիգորի Միքայելեանը, որի մահվան և թաղման լուրը դուժեցին հեռագիրները Սօֆիայից, որի հոգեհանգիստն է կատարվելու այսօր Թիֆլիսի Մոզմու ս. Գեորգեկեցում: Չափազանց համեստ, բայց մի և նոյն ժամանակ չափազանց եռանդուն ու բեղմնաւոր մի գործիչ:

Նրան ճանաչում էր եթէ ոչ ամբողջ հայ ժողովուրդը, գոնէ նրա մի ստուար մասը: Նրան սիրում էին ամենքը, ով ճանաչում էր: Նրան յարգում էր, ով հետևից լսել էր անունն ու այդ անունն հետ կապված յատկանշիները:

Եւ այժմ չը կայ այդ սիրված ու յարգված մարդը. չը կայ Գրիգորի գինւոր...

Մոռանալ... բայց միթէ կարող է մոռացվել նրա անունը...

Երբէ...

Թող տարիները անցնեն միմեանց յետեից. թող հայկական սև իրականութիւնը շարժէ իր անիւը դէպի առաջ, դէպի հեռաւոր լոյսը, թող ասպարէզ դան նորանոր գործիչներ, այնուամենայնիւ Վերստափոր Միքայելեան» անունը կենդանի կը մնայ շատ շատերի յիշողութեան մէջ:

Նա չի մոռացվի...

Ե. Թոփչեան

Ե Ր Կ Ո Ի Ն Օ Ս Ք
(Մակար Եկմարեանի յիշատակին)

Արդէն երբեք տարի առաջ հայ երաժշտութիւնը կարող էր իր համար անգառնալի կոնցերտ համարել Մակար Եկմարեանին. այն ժամանակ մարեց նրա մարի և հոգու ճրագի լոյսը, թողնելով աշխարհին միայն նրա էութեան նիւթականը, իսկ այսօր այդ բայքայված նիւթականի աճիւնը հողը պիտի յաւելնէ իր գիրկը. այդպէս վերջացաւ դժբաղդ հայ երաժշտի կեանքը, որ դեռ այժմ քան ունէր կատարելու հայ երաժշտութեան ապարելի վրա:

Եթէ ֆատալիզմը միայն վերացական գաղափար չէ, այլ ունի իր որոշ հիմունքը բնութեան գաղափարի երկրորդները մէջ, եթէ ճիշդ է, որ իւրաքանչիւրիս ճակատագիրը որոշված է ի վերուստ և նա հալածող ուրուականի պէս ուղեկցում է մեզ մինչև մահվան դուռը, ապա հանգուցեալի ճակատագիրն էր այն սեւթոյր Fatum-ը, որի գառնութեան բաժակը մեր աչքի առաջ կաթիլ առ կաթիլ Եկմարեանի քամից իսպառնում է:

Մակար Եկմարեանի անաչառ գնահատութիւնը պիտի պատկանի ապագայ սերունդին. պէտք է սպասել, մինչև հանգստանայ մարդկային կիրքը և թշնամութիւնը, որից գրեթէ չը մնաց հանգուցեալը իր գործունէութեան վերջին տարիները. իսկ այժմ միայն այսքանը կարելի է անվերջ վկայել, որ «Հայոց պատարագի արարողութեան ներդաշնակ ձայնագրութիւնը կը մնայ միշտ Մակար Եկմարեանի անունն փառքն ու պարծանքը:

Յ. Ս.

ՓՈՒՐԻՆԻՆ ԶԸ ՄՈՒՆԱՅԿԻ

Հասարակական բարեկրթութեան ուշադրութիւնը այժմ ամբողջովն կլանել է Բագուի և շատ իրաւացի կերպով: Այնտեղ անհի աղէտ էր, այնտեղ գաղանութիւնը զրգաւորներին մի անգին բազմութիւն է փողոց գցել:

Աղէտներն էլ կարելի է կարգերի բաժանել: Բագուի աղէտը, անկասկած, առաջին կարգի

աղէտ էր: Բայց արդեօք նա պիտի բոլորովն

մոռացնէ երկրորդական աղէտները: Մարդկային դժբախտութիւնը մի և նոյն է մեծ ու փոքր աղէտներ ժամանակ: Տարբերութիւնը տանջվողների թւի մէջ է, թէ չէ՝ տանջանքը ինքն ըստ ինքեան միանման ցաւ ու կսկիծ է պատճառում: Եթէ մէկը ամեն ինչ կորցրել է մի համատարած կոտորածի ժամանակ, իսկ միւրը՝ մի հրդեհի ժամանակ, իրաւունք ունենք ասելու թէ վերջինին պէտք է բոլորովն մոռանանք, որպէս զի առաջինին օգնենք:

Ո՛չ. Ուր կայ մարդկային արտասուք, այնտեղ պիտի երևան գայ և գթասրտութիւնը: Մարտափիլի կը լինէր տանջվող մարդկութեան դրութիւնը, եթէ կարեկցութիւն վայելելու իրաւունքը միայն առանձնապէս յուսահատութիւն պատճառող, սարսուռ ազդող աղէտներին տրվէր:

Գութային նահանգում հայաբնակ Չխար գիւղը անցեալ փետրվարին մի գառն աղէտի մատնվեց: Մի գիշերվայ մէջ գիւղի մի մասը, մօտ 50 տուն, մոխրակոյտ դարձաւ: Հրդեհը սարսափելի էր. ոչինչ փրկել կարելի չեղաւ և դժբախտ բնակիչները միմիայն իրանց գուլիսները կարողացան հանել կրակներից: Յիսուս այրված տներն մէջ ապրում էին, անուշադի, 400 հոգի, հաշուելով ամենքին—մեծ, փոքր, կին, երեխայ: Աղէտալի գիշերն անցաւ, և միւս օրը այդ բազմութեան առաջ տներն տեղ փոխված էր մոխիրներով ծածկված հող միայն: Չոհերը տեղաւորվեցին հարեան ծանօթների տներում: Ի հարկէ, ժամանակաւորապէս, մինչև...

Մինչև ի՞նչ:

Չխարցիների դժբախտութիւնը երկուպատիկ էր: Նրանք մի քանի ժամվայ ընթացքում մերկ մուրացկան դարձան: Այդ բաւական չէր, բայց նրանք զգալի էր մի այնպիսի ժամանակ, երբ ամբողջ Կովկասը, ամբողջ Ռուսաստանը ցնցված էր Բագուի սպանդանոցի սարսափներից...

Սովորական ժամանակ 400 մարդկանց լացը ինքն ըստ ինքեան մի հասարակական աղէտ կը լինէր: Բայց, չխարցիների դժբախտութիւնից, ժամանակը սովորական չէր: Հրդեհը գեղեցիկ հաղիւ հասաւ շրջած գեղեցիկ աղանդիկներին: Եւ լողները լացին, մարդկանց ականջներին: Եւ լողները լացին, անցան: Պարտք չը գեղցին: Կար Բագուն: Ուրիշ արտասուք, ուրիշ մերկութիւն չէին ճանաչում:

Դա մի մեծ անարդարութիւն է:

Չխարցիներին չը պիտի մոռանանք: Հարկաւոր մարդիկ, երեխաներ մնացել են բաց երկիքի տակ: Ի՞նչ անեն, մեր գնան: Յուրաձան, հաց չը կայ, մերկութիւն, կատարեալ մերկութիւն: Կարձի էք լռել, կարձի էք արդարանալ:

Ո՛չ. մի արդարացում չէ կարող գտնել բաղային անտարբերութիւնը մարդկային դժբախտութեան դիմաց: Չը կայ երկրի տակ և մի հատ հասկացողութիւն, որ այս զէզրում վերացնէր հասարակութեան պարտաւորութիւնը:

Օգնեցէ բագուցիներին, բայց օգնեցէ և չխարցիներին:

Վերցրէք դժբախտութիւնը: Թողէք որ բաղայինները լինեն նրա աւագ, մեծ որդիները, իսկ չխարցիները՝ փոքր որդիները: Թող նրանք եղբայրներ լինեն—մեծ և փոքր:

Մեծերին չենք մոռանում: Փոքրերին էլ չը մոռանանք:

Թիֆլիսում կազմված է յանձնաժողով՝ չը խարցիներին օգնելու համար: Բայց ի՞նչ է նա ստացել մինչև այժմ: Կոպէկներ միայն: Բացառվեց թիֆլէ, որ կոպէկներով այնքան մարդկանց արտասուք սրբել չէ կարելի: Բացառվեց որ հրկիզեալները սպասում են մեր օգնութեան—կարգին օգնութեան...

Ո՛չ. Երևոյթներ կան, որոնք ոչ մի բացատրութեան կարօտ չեն: Նրանք ուղղակի հրամայում են, նրանք իրանք մի. երկու խօսքով էլ չափազանց պերճախօս են, այրող, ստիպող:

Շտապեցէք, ուրեմն: Չորս հարկեր դժբախտների ձեռք են սպասում:

Շտապեցէ: Չի մարդկային կոչումը պարտաւորեցնում է ոտի կանգնեցնել մերկերին, մուրացկանութեան ձիւրաններից խել հարկաւոր մատաղ հասակներ...

մեծ իրարանցում առաջ բերեց: Սկզբին հին երգերը Մինչև անգամ «Навкэ» լրագրի էջերում երևաց մի նամակ, որը եթէ անստուրագրի լինէր, ընթերցողը կը կարծէր թէ այդ նամակը հանգուցեալ Վելիչիկի չը հրատարակված երգերից է: Մի ոմ Մաշաբիլի «Навкэ»-ի էջերում Դուռայի գլխին հայոյնք է թափում, մեղադրում է հայերին ուղղութեամբ այդ բոլորը, ի՞նչ պատահեց: Բանից դուրս է գալիս, որ այդ բոլորը թուրքմացութեան արդիւնք է:

Ես իբրեւ ձայնաւոր ներկայ էի այն խորհրդակցութեանը. հայերը այնտեղ մեծամասնութիւն չէին կազմում. կային այնտեղ ուսու, վրացի, թուրք, գերմանացի և այլն: Ժողովի գլխաւոր նպատակն էր որոշել, թէ ինչ ձևով թիֆլիսի Դուռայի աղէտը է յայտնի իր կարծիքը փետրվարի 18-ին Բարձրագոյն Ուկրաինայի յիշված հարցի մասին: Այդ առիթով ժողովում խօսվեցին ճառեր թէ հայ և թէ միւս ազգերի պատկանող իրաւաստների կողմից: Ոչ ոքի մտքով անգամ չէր անցնում թէ այդ համերաշխ ժողովի արդիւնքը կը լինի կրքերի նոր բռնկում: Ժողովականներին շատերը չը մնացին մինչև վերջը: Ժողովի վերջում խօսվեց և ապագայ պատգամաւորութեան մասին: Տեղեցին մի քանի անուններ և ահա դրանով էլ վերջացաւ հարցը:

Նախ ոչ ոք չէ կարող ապացուցանել, որ այն 19 ձայն, որը ստացել էին պ. Վերմիշեանը և միւսները, միայն հայեր էին տուել: Երկրորդը՝ այդ 19 ձայնը կազմում է ձայնաւորների 1/4-ից քիչ, ուրեմն ոչ մի կերպ չէ կարելի ասել, թէ այդ Դուռայի որոշումն է և երրորդը՝ դեռ ևս կասկածելի է այն հարցը, կը ցանկանայ արդեօք Դուռայի ուղարկել Պետերբուրգ պատգամաւորութեան, թէ կը բաւականանայ յայտնելով միայն իր կարծիքը, որը կուղարկվի միջնորդութեանը: Ուրեմն ունեն արդեօք իրաւունք մեղադրելու Թիֆլիսի Դուռայի ձայնաւորներին չովինգի և ուղարկագրի մէջ:

Ես կարծում եմ, որ ոչ մի իրաւունք: Նոյն իսկ այժմ ձայնաւորներից ոչ մէկը չէ մտածում այդ մասին և բոլորը հաւատացած են, որ ոչ մի տարածաշրջան, կամ երկպառակութիւն չը կայ Դուռայի ձայնաւորներին մէջ: Ցաւալի է դիտել այն իրողութիւնը, որ երկու հարեան ազգեր, որոնք համարում են իրանց կուլտուրապէս զարգացած և որոնք միմեանց եղբայրութեան ձեռք են պարգում, մի չնչին, անշարժ թուրքմացութեան պատճառով աղմուկ են բարձրացնում, թմբուկ են հարում և նորից թշնամութեան սերմեր ցանում:

Ձայնաւոր

ԲԱԳՈՒԻ ԱՂԷՏԻ ԶՈՒՆԻՐ ՕԳՏԻՆ

Մտացանք. 1) Բերեքեանի միջոցով (Մայիս) 450 ռուբլի, 2) Յ. Գրիգորեանից (Եկմարեանից) 3 ռուբլի, 3) Արուսեանի ձեռքով հաւաքած (առանց ազգի խորութեան 64 ռուբլի, 4) Շուշուց Ս. Բաճ. Իսկանդարեանի ձեռքով հաւաքած 23 ռուբլի, 5) Կիշինովից Փաննակեանի ձեռքով հաւաքած 10 ռուբլի, 6) Փիւ գիւղի հասարակութիւնից ուսուցիչ Մ. Մաքիմեանի միջոցով 82 ռուբլի, 7) Յովհաննէս Կ. Մարտիրոսեանից (Վանից) 3 ռուբլի, 8) Մեծ Գեօրգիւրա գիւղի հասարակութիւնից Եղիշ Գաբոսիանի ձեռքով հաւաքած (առաջնորդ. մասնագ. յանձնելու համար) 19 ռուբլի, 9) Սուխումի շրջանից Հ. Ս. ի ձեռքով հաւաքած (առաջնորդ. մասնագ. յանձնելու համար) 32 ռ. 63 կոպ, 10) Լոռ գիւղի մի խումբ տեւական պատանիներից Ա. Յուրեանի և Արտ. Ռոստոմեանի ձեռքով հանգանակած 40 ռուբլի, 11) Հարութ գիւղի 35 նուիրատուներից գործակալ Սրբակ Բաճ. Տէր. Սուխումեանի միջոցով 53 ռուբլի, 12) Օլթիի հայ հասարակութիւնից հաւաքած (առաջնորդ. մասնագ. յանձնելու համար) 103 ռուբլի, 13) Մթահան գիւղի (ներքին Բաճեանի) Գաբրիէլ Գաբոսեանի ձեռքով հանգանակած 44 ռուբլի, 14) Թէրոսեանից Ներսէս Բաճ. Հերոսեանի ձեռքով հանգանակած 176 ռուբլի, 15) Եղ. Ս. և Հ. Գիւրեաններից (Նոր. Իւզէրէ գիւղ) 8 ռուբլի, 16) Յովհաննէս Կ. Տէր. Սալաւորեանից (Մալուստեից) Բոսովից 10 ռուբլի, 17) Դ. Սէր. Արաբիկեանից (Ստանկինո) 3 ռուբլի, 18) Արաբիկ Փաննանի միջոցով հաւաքած (Մեղիգեւ) 85 ռուբլի, 19) Բնիգէր Գեօրգի Մ. Շահնուրեանի միջոցով հաւաքած 38 ռուբլի, 20) Արաբի Սալաւորեանից (Կրասնավոդսկ) 5 ռուբլի, 21) Միլիտի Մարգարեանից (Մալուս-Սալաւորեանից) 10 ռուբլի, 22) Պերսոն գիւղից Արսէն Բաճ. Բուրգեանի ձեռքով հաւաքած 17 ռուբլի, 23) Չայքեղ գիւղից Մարգիւ Բաճ. Անկերեանի միջոցով 13 ռուբլի, 24) Մալուս գիւղից Վահան Դուլիսեանի միջոցով հաւաքած 36 ռուբլի, 85 կոպ. 25) Կիւրազովից Պոլոս Բաղդասարի միջոցով 107 ռուբլի 10 կոպ. 26) Սամարկանդից Եփր.

Տէր-Մատթարեանի և Աստուծոյ Արարչութեանի ձեռքով հաւաքած 65 բուրի 50 կողմ. 27) օր. Շուշանիկ Ման-Աղանի ձեռքով հաւաքած 8 բ. 30 կ. 28) Ախալքալիկի Տէր-Մանուկեանի ձեռքով 755 բ. 85 կ. 29) Չարկուի Պետրոս Բախտանի միջոցով ուղարկած 121 բ. 60 կ., 30) Մերվի «Տաւրոս» ից 216 բ., 31) Եկատերինսօղարից Ահարոնեանի միջոցով ուղարկած 130 բ. 30 կ., 32) Մերվի «Տաւրոս» 207 բուրի, 33) Մերվի-Պետրոսեանից 5 բ. 34) Տէր-Պողոսեանից 5 բ. Ընդամենը գումարը նախկին ստացածներէ հետ միասին 18249 բ. 30 կողմէի:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Հանդիմանի «Րօզա Բերդ» պիեսը հայկական բեմի վրա.—Հայուհեաց ընկերութեան ցերեկով.—Համերգներ, «Բաւաճանութիւն» նոր ներկայացում)

I

Հայկական բեմի վրա Հանդիմանի «Րօզա Բերդ» դրաման կատարվեց ընդհանրապէս աւելի կերպով և մասնաւոր լաւ էր գլխաւոր հերոսուհու դերում տիկին Մայրաբեան:

Մեր քաջ ձեռն տեսնելու նոյն պիեսը Թիֆլիսում ուսանողներէ բեմի վրա և պէտք է խոստովանենք, որ հայերէն ներկայացումը աւելի աջող և բաւարար էր: Մէյքընօլի խումբը, որ տակն մի շարք վերին աստիճանի գեղեցիկ կազմակերպված ներկայացումներ և արժանապատիւ թատրոնաւարներէ անկող շնորհակալութեան, թոյլ էր «Րօզա Բերդ» պիեսի կատարման մէջ:

«Րօզա Բերդ» Հանդիմանի նորագոյն պիեսներից մէկն էր: Նրա մասին կարծիքները միատեսակ չեն: Կան այնպիսիները, որոնք համարում են այդ պիեսը լաւագոյններից մէկը, եթէ ոչ լաւագոյնը: Կան և հակառակ կարծիքներ:

Անկասկած դա լաւ պիես է, բայց ոչ լաւագոյնը Հանդիմանի պիեսներից: Պիեսի մասերը համաչափ չեն և այնպէս չեն կապված, որ հանդիսականի ուշադրութիւնը կենտրոնացած լինի պիեսի հիմնական գաղափարի վրա:

Բոլան գեղական մի աղջիկ է, որ զոհ է դարձել եւրոպական գեղի նորագոյն հոսանքների ծախսերին: Նա գեղեցիկ է և այդ պատճառով նա գրաւել է իր վրա և կալուածատէր Ֆրամի ուշադրութիւնը, և մերկանալով Շարէկմանի կրքոտ հայեացքները: Կարուածատէրը, ինչպէս դժբաղդ իր ամուսնութեան մէջ, թոյլ է տալիս իրան չափը անցնելու Բոլայի հետ ունեցած մտերմական յարաբերութիւններէ մէջ: Շարէկմանը նոյնը անում է, որովհետեւ առհասարակ չէ ուզում ճանաչել բարոյական պարտաւորութիւններ և այն կարծիքին է, որ պէտք է կենսաբանական շփոթման, ինչ որ նորագոյն է:

Բոլան դժբաղդացի է: Նա պատրաստուում է մայր լինելու: Նրա հայրը, (Պետրոսեան), որ ոչինչ չէր գիտէ եղածների մասին, պատրաստուում է մարդու տալ իր աղջկան և գրտնում է իրան հաւանած մի փեսացու, վերջինս (Աւետեան) թէ Բոլայի սրտի առարկան չէ, բայց գրաւում է նրան իր բարի և ներողամիտ բնավորութեան շնորհիւ:

Բոլայի տանջանքը հասնում է իր գագաթնակէն, երբ նա մտնում է երկունքին, գաղանթի յայտնագործութեան և իր խայտառակութեան: Նա յուսահատութեան յուզմունքներէ մէջ խեղդում է իր նորածին գաւազին և թաղում նրան անասունու: Բայց յետոյ սարսափում է իր արածից և խելագարվում:

Տիկին Մայրաբեան կատարեց Բոլայի դերը խելացի, զգացված և ընդունալ արտայայտութիւններով: Նա իւրացրել էր Բոլայի արտապատկերները և յոյզերը, անցնելով կանգնած դէպքերի փոփոխվող շրջաններով: Նա կատարեց իր տանջանքը զգացնել տալ հանդիսականներին և ցոյց տալ, որ Բոլայի շրջապատողները պէտք է նախ և առաջ մարդիկ լինէին, բայց ոչ կըրքոտ գաղանթներ և կամ ակամայ դահիճներ:

Տիկին Չարէլ տիկին Ֆրամի դերում ընդհանրապէս բաւարար էր: Նրան քննադատ էին ձայնի միօրինակութիւնը և գանգատաւոր տէմբը: Տիկիններ Վարդուհի, Ազիւ, Նոնիկեան աղբիւրի մօտ տեսարանում աջող էին:

Ներջինս կալուածատէր Ֆրամի դերում խօսում էր, խաղում էր աղոյ, բայց չէր իւրացրել համապատասխան գրիմ և արտայայտութիւն: Պետրոսեան ծերունի Բերդի դերում ընդունալ էր, Չարիֆեան Շարէկմանի դերում աջող էր, բայց նա տուել էր Շարէկմանին աւելի խելացի մարդու բնավորութիւն, քան նա ունի: Շարէկմանը խոր ընտելութեան չէ. նա գեղեցիկ հագուստ ունեցող հասարակական տակաւն է:

Աւետեան խաղում էր երկնային, բայց մօտենում էր Աւետեանի բնավորութեան աջող արտայայտութեան: Միւս դերակատարները ընդհանրապէս էին անբոլորութիւն:

Չը նայելով այն բանին, որ դերասանները լաւ էին ընդհանրապէս պատրաստված, բայց ամբողջութիւնը տեղ տեղ թուանում էր և զգացվում էր կատարման մէջ դանդաղութիւն և մի տեսակ անվճռականութիւն ու երբեմն:

Մերող

II

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայուհեաց ընկերութիւնը գիտատրամութիւն ունի Չարիֆեանի կազմով մի ցերեկով Թիֆլիսի ժողովարանի ամառային բնակարանում: Ցերեկով ինչ կը մասնակցէ Կարա Մուրզայի խումբը: Ցոյց կը տրվեն հայկական սովորութիւններից տեսարաններ: Վերջնական ծրագիրը դեռ չէ մշակված:

Լուսն էր, որ ներկայ մեծ պատի հինգերորդ շաբաթում Կոմիտաս վարդապետի դեկլամարութեամբ պէտք է տրվեն երկու հայկական հոգևոր համերգներ Թիֆլիսում:

Երկուշաբթի երեկոյան Դրսմատիական ընկերութիւնը տալիս է Սուրբատուի «Բաւաճանութիւն» դրաման նորոգէ անգամ: Այս անգամ Օթար-բէկի դերում դուրս է գալու պ. Ստեփանեանը, Բէսօի դերում պ. Միրազեանը:

ՆԱՄԱԿ ԳԶԱՐՈՒՄ

Փետրվարի 25-ին

Բագուի կոտորածը սարսափ ազդեց և Ղրղարի ազգաբնակչութեան վրա: Իւրեր էին պըտուում, թէ մի քանի հարիւր զինված չեչեններ յարձակվելու են Ղրղարի վրա: Այդ լուրը հերքվելուց յետոյ մի ուրիշ լուր սկսեց յուզել մարքերը: Չարածիտ մարդիկ ուս ազգաբնակչութեան մէջ տարածել էին իբր թէ հայերը թուրքերի հետ միացած յարձակվելու են ուսանների վրա, որի պատճառով թէ քաղաքի և թէ շրջակայ բազմաթիւ ուսանող գիւղերի ուսանողները գրգռված էին հայերի դէմ, այնպէս որ արեւմտահայերէն անխուսափելի կը լինէր, եթէ առաջը չառնվէր: Այստեղի երկուցեցիները գործակալ հայր Շաթիրեանցը, նկատելով այդ փետրվարի 20-ին եկեղեցում աղօթող բազմութեանը պարզելով ներկայ դրութիւնը՝ յորդորեց, որ ոչ մի առիթ չը տան արեւմտահայ ընդհարման և համերաշխ ապրելու դրացիներէ հետ, իսկ գրգռված մարքերը խաղաղացնելու համար յայտնեց, որ ինքը երկու քահանաների հետ միասին կերթայ տեղիս պ. Ատաթանի մօտ և կը խնդրէ խառն ժողով կազմակերպել թէ քաղաքում և թէ գիւղերում հաշտելու, ուսաններից և թուրքերից՝ պատող լուրերը ջրելու և գրգռվածներին հանգստացնելու համար: Փետրվարի 22-ին ատաթանի կարգադրութեամբ կայացաւ խառն ժողով ձրի թէյարարի հրապարակում, որ կային մի քանի հարիւր բնակիչներ, որոնց՝ ատաթանը յորդորեց համերաշխ ապրել սէլ մէկու հետ, և հերքեց պատող սուտ լուրերը: Նոյն մտքով խօսեց ուս քահանան և թուրքերի ախուհը: ապա խօսեց հայր Շաթիրեանը մասնացոյց անելով ամառը յաճախակի կրկնվող հայ և ուս հարած բանտներէ արեւմտահայ ընդհարումները և յորդորեց ամենայն հնուց մնալ արեւմտահայերէնից և նմանօրինակ ընդհարումներին ազգային կերպարանք չը տալով, բաժանել և յանդիմանել կուռղիներին:

Յուզված մարքերը՝ հանգստացան և ամենքը ապահովված ցրվեցին:

Փետրվարի 24-ին Վարդանանց տօնը կատարվեց մեզում մեծ շքով: Ընդունալ հայերը փակել էին իրանց խառնութիւնը, չը նայած, որ եղանակը անձրևային էր, եկեղեցում չը տեսնված բազմութիւն կար: պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց Բագուի աղէտին զոհ գնացած հայերի համար, որին ներկայ էին տեղիս մուսուլմանները հոգևորականները իրանց ցաւակցութիւնը յայտնելու համար: Օրվայ տօնի և հոգեհանգիստի առիթով կարծ, բայց ազդու խօսեց հ. Ս. Շաթիրեանը:

Այս րոյորը մեծ ապաւորութիւն թողեց ժողովրդի և ներկայ գտնվող թուրքերի վրա: Հոգեհանգիստից յետոյ ժողովրդից շատերը իրանց ցաւակցութիւնը յայտնեցին Բագուի եղբայրասպան դէպքերի առիթով: Հետեւալ ուրբաթ օրը, Շաթիրեան քահանան մի քանի հոգևորականներ և ժողովրդի հետ գնաց թուրքաց մզկիթը և յայտնեց իր ցաւակցութիւնը Բագուի դէպքերի առիթով: Փոխադարձաբար տրվեցին համերաշխութեան խոստումներ:

Ա. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԶԱՄԱՆՈՒՑ

Մարտի 8-ին

Շամախում օրվայ խօսակցութեան նիւթը մօտ ապագայում մի միջնակարգ ուսումնարան հիմնելու հարցն է: Այդպիսի մի հիմնարկութեան գոյութիւնը, նամանաւոր Շամախում, որը իր գաւառով ունի մօտ 141 հազար բնակիչ, անհրաժեշտ է: Դրա կարիքը վաղուց էր զգացվում: Դեռ մինչև առաջին մեծ երկրաշարժը 1872 թիւն, երբ տակաւին Շամախին նահանգական քաղաք էր, այստեղ գոյութիւն ունէր բնակչական ուսումնարան, բայց ահա իր աղէտից յետոյ, փոխադրվեց Բագու և այդպիսով զրկված մնաց մինչև մեր օրերը: Այդ պատճառով քաղաքից սկսեց հեռանալ ուսումնոր, զարգացած դասը: Այդպիսի մի ուսումնարանի բացակայութիւնից էր, որ տեղիս գիւնդական գունդը Նիւսախուզով փոխադրվեց և շատ քաղաքացիներ, որոնք կըրթութեան տալու գաւազներ ունէին, մերթառ մերթ, Բագու, Թիֆլիս և ուրիշ կենտրոնական քաղաքներ գաղթեցին: Միջնակարգ ուսումնարանի բացակայութիւնից է, որ հաշտութեամբ մատաղ ոյժեր, չունենալով ներթաւան միջոց շարունակելու ուսումը, տեղիս քաղաքական ուսումնարանը աւարտելուց յետոյ, փչանում են ընդհանուր հոսանքի մէջ:

Այդ րոյորը ի նկատի ունենալով, շամախեցիները մի քանի անգամ փորձեցին այդ հարցին վերջնական լուծում տալ: Մօտեցաւ մի քանի պարոններ և գաւառապետի շնորհով, աջողվեց լուծել այդ հարցը: Ժողովուրդը մի համախօսական կազմելով, ներկայացրեց գաւառապետին, որը իր կողմից պիտի ներկայացնէ Բագուի նահանգապետին և միջնորդէ: Ուսումնարանը լինելու է, ի հարկէ միջնակարգ և բնակական ուսումնարանի ծրագրով: Ծախքը պէտք է հոգացվի պ. Բուրադեանից: Ներքին քաղաքի նուրբած 40,000 բ.: Բուրադեանի համաձայնութիւնը արդէն ստացված է, իսկ մնացած ծախքը վերցնում է իր վրա քաղաքը: Ուսումնարանի բացումը առաջիկայ սեպտեմբերին է սպասվում: Ի սրտէ շնորհաւորում ենք այդ ձեռնարկութիւնը, ցանկանալով կատարեալ աջողութիւն:

Յ. Մատթէոսեանց

ՆԱՄԱԿ ԶԱՄԱՆՈՒՑ ԳԻՒԳԻՑ

Մարտի 1-ին

Բագուի անահնկալ և վերին աստիճանի քառանկի աղէտները նախ խլրտում և յուզումը առաջացրին Ջահիկի հայ և թուրք հասարակութեան մէջ, գրգռեցին թուրքերի ֆաշիստիկական կրքերը, բայց բարբախտաբար շուտով անասան միտք, ցաւակցութեան արձագանք գտան հաւասարապէս երկու դրացի ազգերի սրտերում:

Արդեօք այդ ցաւակցութեան արտայայտութիւնը երկու եղբայր ազգերի մէջ յարատւ կը լինի, թէ ոչ, գուշակել դժուար է. ցոյց կը տայ ապագան:

Փետրվարի 25-ին Ջահիկ ժամանեցին Երևանի թեմական դպրոցի տեսուչ Գաբրիէլ վարդապետը և Հին Նախիջևանցի մօլլա Հաջի-Հիւսէյն-Միլին, որոնք դիմաւորվեցին երկու ազգերի խառն բազմութեամբ իրանց հոգևորականներով: Բազմութիւնը լուս յուզեցութեամբ հանդիսաւորութեամբ շարժվեց դէպի գիւղի Հաջի Գիւրի մզկիթը: Բագուի եղբայրասպան կոտորածի զոհ գնացածների համար հոգեհանգիստ կատարելուց յետոյ, Մօլլա-Հաջի-Հիւսէյն-Միլին բարձրացաւ մամբարի վրա, երկար, ազդու և արտառույց քաղաքի խօսեց երկու դարաւոր եղբայր ազգերի համերաշխութեան կապը անխղիւր պահելու համար: Ահա բերում ենք մի քանի կտոր նրա ստած խօսքերից:

«Միեկի ժողովուրդ, ասում էր նա. մենք բոլորս էլ եղբայրներ ենք: Եթէ մենք մոռանանք մեր եղբայրութիւնը, մեր ձեռքը ներկենք եղբայրական արիւնով, կը հաւասարվենք Կայէնին, որ թափեց իր եղբոր Աբելի անոնը արիւնը: Մենք թուրքերս հայերի հետ դարաւոր հարեաններ ենք, ապրում ենք կողք-կողքի տուած, միևնույն հողի վրա. դժբախտ քաղաքներ մենք քանի քանի անգամ ենք ձեռք կարկառել իրար փոխադարձ օգնութիւն հասցնելու, բայց այժմ չար շէյթանը (նահալթ շէյթանին, մոմաց ամբոխը ներքինից) հակառակի պէս ներս է սողացել մեր երկու եղբայրներին մէջ և ատելութեան սերմեր է ցանում մեզ իրար հետ կռիւցնելու համար: Եթէ մենք շէյթանի կամքը կատարենք, հա-

կառակված կը լինենք և Ալլահին և Նրա մարգարէներին: Աշխարհում Ալլահը շատ ազգեր է ստեղծել. ֆրանկներ, ալեմաններ, ինգլիզներ, եսպաններ և այլն. բայց մեզ հայն է հարկաւոր, նա է մեր դրացին, նա է մեր եղբայրը:

Արդեօք ինչ շահեցին հայերը և թուրքերը, Բագուի աղէտ անմիտ եղբայրասպան կոտորածից իրար դէմ. ոչինչ, համարեա ոչինչ, բացի անազին կորստից: Երկու կողմերն էլ հաւասարապէս ջարդվեցին, երկու կողմերն էլ անազին զրկանքներ կրեցին, իսկ հետեւեք եղաւ ամբողջ մի խորունկ զգացմունք և ապագա շաւանք...»

Ապա բարձրացաւ ամբիօնի վրա Գաբրիէլ վարդապետը և թուրքերին դիմեց մի բարոզով, որը համերաշխութեան մի ազդու կոչ էր և որը բառ առ բառ թարգմանում էր գիւղի դրացի պ. Ալէքսանդր Տէր-Պետրոսեանը:

Առաջին անգամ էր, որ Ջահիկում իսլամը և քրիստոնէութիւնը, խաչը և կիսալուսինը՝ հաշտութիւն կնքած իրար հետ, փոխադարձ այցելում էին իրար աղօթատները: Եկեղեցում վարդապետը հոգեհանգիստ կատարելուց յետոյ սեղան բարձրացաւ և, հին-պատմական դրեքերից օրինակներ բերելով, երկար խօսեց ազգերի համերաշխութեան անհրաժեշտութեան մասին:

Սուսեց նաև գիւղի մօլլա-Մամեդ-Թաղի Մօլլա-Մուսայ-օղլին:

Գիւղի հայ հասարակութեան աւագագոյն ներկայացուցիչները մէկը, պ. Ջաբար Էլիս-գեանցը խնդրեց Գաբրիէլ վարդապետին, մօլլա-Հիւսէյն-Միլին և մօլլա-Մամիդ-Թաղուհ «հոգեւոյ» կարգալ Բագուի կոտորածին զոհ գնացողների համար, նուրբելով նրանց վեց բուրի:

Հանդիսակատարութիւնից յետոյ ամբոխը սփռվեց սպաւորութեան տակ ցրվեց:

Գ. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Թիֆլիս մարտի 11-ին
Երէկ երեկոյան Թիֆլիսի Հայոց Դրամատիկական ընկերութեան խումբը ներկայացրեց Հանդիմանի «Րօզա-Բերդ» դրաման իմ թարգմանութեամբ: Մամուլի մէջ շատ շատ անգամ խօսված է հայ դերասանների նայազիսական հմտութիւնների և բեմի վրա նրանց գործած յեղուական սխալների մասին: Ծաճախ թարգմանիչը կամ հեղինակը գործածում են, որ իրանց դրամ «սինկրո» ամբողջ գաղտնում է «սինկրո», «թոյլը» դառնում է «վտիտ», «մարդ է գալիս» վերածվում է «մի ոմն է գալիս»: Ի, և այլն և այլն:

Այս անգամ էլ իմ թարգմանութեան մէջ ես նկատեցի նոյն ազգա վարժուցը դէպի դժբաղդ հայ լեզուն: Լաւ կը լինէր, որ մեր դերասանական խումբը թողնէր լեզուի պատասխանատուութիւնը թարգմանիչների և հեղինակների վրին և ինքը ուշը դարձնէր միայն լաւ խաղի վրա:

Խաժակ

II

Թիֆլիս, մարտի 12-ին
Ներսիսեան դպրոցի ուսուցչական խումբը փոխանակ պաւի դնելու իրանց երեմն պատասխան՝ Ներսիսեան դպրոցի նախկին ուսուցիչ հանգուցեալ Մակար Նիվախանի վրա՝ որոշեց պատկեր համար հանգանակված գուժաւոր բաներին: Բոլոր յատկացնել Զխարի հրկիզանքի օգուտ: Ուսումը ներկայացնելով այս գումարը յարգելի խմբագրութեանը՝ խնդրում են հասցնել ըստ պատկանելոյն:

Պաշտ. տեսչի Ստ. Մախանեանց

III

Թիֆլիս, մարտի 12-ին
Թիֆլիսի Հայոց Առաջնորդարանի Յանձնաժողովը ստացել է մարտի 2—10 ընթացքում հետեւեալ նուէրները ի նպատակ Բագուի աղէտի զոհների: 1) «Մշակի» խմբագրութիւնից 631 բ. 54 կ., 2) «Եւգենի Օնէգին» օպերային ներկայացումից տիկին Սուզադեանի ձեռքով, 315 բ. 20 կ., 3) «Մշակի» խմբագրութիւնից—122 բ. 10 կ., 4) Պ. Ս. Լաւրարեանից—100 բ., 5) Թիֆլիսի քահանաների գանձանակի վարչութիւնից—200 բ., 6) Շամախիի գործակալից, հանգանակված վիճակի 14 գիւղերի հայ հասարակութիւնից—124 բ. 11 կ., 7) Լուսինայի քաղաքի հայերի մէջ հանգանակած Ստեփանոս քահանայ Պապանի, Սողոմոն Սաֆարեանի և երեցիոյն Պողոս Աճէմեանի ձեռքով—266 բ., 8) Բերդի հայ ուսանողի հանգանակից—20 բ. 24 կ., 9) Վարդապետը գիւղի հայ հասարակութիւնից—30 բ., 10) «Մշակի» խմբագրութիւնից 1000 բ., 11) «Մշակի» խմբագրութիւնից 3000 բ., 12) «Новое Обозрение» լրագրի խմբագրութիւնից—2,400 բ., 13) տիկին Վ. Բանանեանից՝ «Մուրճի» խմբագրութեան միջոցով—100 բ. և 14) Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի տեսուչ Գալ. Չարիսեանից,

ման գաղնամուրի վա շնորհալի կերպով նուագելում, ուսուցիչ Рукавицын և Դ. Գան-ջուման՝ ջութակի վրա: Մասնաւանդ լաւ էր Դ. Գանջուման հայկական պոպպուրի № ում: Ամենքն էլ հանդիսականները կողովք աբա-նացան երկարատև որոնցոստ ծափահարու-թիւնների և bis-երի: Ամենից վերջը բեմի վրա աեղի ունեցան հայկական կենտ և կլոր պարեր պարերգերով: Պարողները՝ թէ կանայք և թէ տղամարդիկ՝ հագնված էին ազգային (Ախա-բաւքի, Ախալցխայի և Ալեքսանդրապոլի գա-ւառներում գործածվող) տարազով: Թէպէտ պարերը և, մասնաւանդ, կանանց հազած տա-րազը այնքան էլ աջող չէին, սակայն իբր նո-րութիւն՝ մեզանում մեծ ուրախութիւն պատ-ճառեցին ժողովրդին: Շնորհակալութեան ար-ժանի է քաղքային ուսումնարանի ուսուցիչ Վ. Рукавицын-ը, որը սիրով մասնակցեց «Հայկական երեկոթիւն» և ամենայն բարե-խղճութեամբ կատարեց իւ գործը: Երեկոթից գոյացած զուտ օգուտը յատկացված է տե-ղական բարեգործական ընկերութեան օգտին: Փետրվարի 27-ին հայոց ս. Ստեփաննոս եկե-ղեցւոյ պատարագին սկսող ճոթիկոնքիստ կա-

Չորեքշաբթի, յունվարի 26-ին, 1905 թ. Կարսի հիւանդանոցում մեռաւ ՆԵՐՇԱ-
ՊՈՒՀ ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ ԲԻԻՐՔՅԱՆԸ, որի մասին արտի ցաւօր յայտնուի են հայ-
րը, մայրը, եղբայրները և բոլորքը:

Կենտրոնական Գրախոսականը փաճառվում են

հետևեալ նոր գրքերը:

- Ահարոնեան Ա. Պատկերներ թերթահայերի կեանքից, Ս. Պ. գ. 1 ր.
» Մըրկի Սուրբը. թ. գ. 1 ր.
» Իտալիայում թ. գ. 1 ր. 50 կ.
» Արագը, պատմութեան ժողովածու թ. գ. 30 կ.
» Լուսին, թ. գ. 60 կ.
Գեորգի. Հերման և Դորոթեա, թարգմ. Յ. Պ. Վաղարշ. գ. 40 կ.
Նապոլեոն Մ. Երազ. Պատկերներ Բալթիկանու կեանքից, թ. գ. 3 կ.
Իա Էլպաճե. Լուսնեակ գիշերին թարգմ. Ղ. Կ. թ. գ. 5 կ.
Խաճակ. Հարկերը Տաճկաստանում թ. գ. 40 կ.
Վազիրբեգի Ա. Ֆաթի, գաղական պատմութեան թարգմ. Ղ. Կ. ա. գ. 5 կ.
Մեղրիի Գ. Անձեղ զոհ թարգմ. Ղ. Կ. թ. գ. 8 կ.
Մանանդեան Յ. և Անտոնեան Հ. Հայոց նոր վկաները Վաղարշ. գրին է 3 ր.
Մեռ Էմանուէլի գրադարանը. Արարը ծերունի Ս. Պ. գ. 10 կ.
» Բարը երգում է Ս. Պ. գ. 10 կ.
» Ճշմարիտ մեծութիւն Ս. Պ. գ. 7 կ.
» Նոր Լոյս Ս. Պ. գ. 10 կ.
» Մեծ մօն Ս. Պ. գ. 10 կ.
Յուսիկ Եսիսկոյան Հայրապետական Ս. Պոռի մասին Վաղարշ. գ. 30 կ.
Նագարեան Է. Բաճ. Լեզուի ցոյցը մ. գ. 40 կ.
Նիկոլայի Է. Գոգիա Ուրվի թարգմ. Ղ. Կ. թ. գ. 8 կ.
Չարովի Ս. Չորս պատկեր Ս. Պ. գ. 1 կ.
Պատկերներ Ռ. Երկաթե թուղթի մեծ գ. հատ. գրին է 1 ր.
Սեյիան Հայթա Ֆիրատ. թ. գ. 35 կ.
» Լեւոն-Կայսր Եւթը. գ. 20 կ.
Սոլովեան Յ. Ղանադուր Յանց, վաղվի մէկ արար. թարգմ. գ. 20 կ.
Սեյիսի Ս. Մարի Պ. Յանցար մօր խոստովանութիւնը թ. գ. 5 կ.
Տ. Նժ. Լուսաղբիւն. թարգմ. Ս. Բ. Բ. գ. 1 ր.
Տեռ. Աստուածատեան Հ. Բաւարան Հայ Կենսագրութեանց, թ. գ. 70 կ.
» Նաչառուր Արդիւն. թ. ա. 5 կ.
Փախազեան Վ. Վերապ և ուրիշ գրոյցներ. թարգմ. գ. 5 կ.
Քուչակ Ն. Միտի երգիչ. թ. գ. 40 կ.
Օսթրոգոսկու Վ. Վերեւի Տէլ Ս. Պ. գ. 10 կ.
Դժբաղ Փարս թարգմ. գրին է 7 կողէկ:
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю.

1—1

Комитетъ вспомогательнаго Общества «Санаторій» на Эссентуковской группѣ Кавказскихъ Минеральныхъ водъ доводитъ до общаго свѣдѣнія:
Желающіе поступить въ санаторій приглашаются заявлять объ этомъ въ Ко-
митетъ Общества съ 15-го Марта по 1-е Мая въ Москву, Хлѣбный пер., д. № 9,
съ 1-го Мая въ Эссентуки. Къ заявленію прилагаются: описаніе служебнаго,
матеріальнаго и семейнаго положенія, свидѣтельство врача о необходимости лѣ-
читься въ Эссентукахъ (безъ гербовыхъ марокъ), почтовые марки на отвѣтъ и
указаніе, въ какую очередь желательно поступить: въ первую аккуратно съ 15-го
Мая, во вторую съ первыхъ чиселъ Іюля по 1-е Сентября. Полный пансіонъ
стоитъ 40 руб. въ мѣсяцъ съ человѣка. Почти все комнаты на двоихъ. При про-
чихъ равныхъ условіяхъ предпочтеніе отдается членамъ Общества, которые вно-
сятъ 10 рублей въ годъ. Санаторій предназначенъ исключительно для малососто-
ятельныхъ людей труда всякихъ профессій, нуждающихся въ лѣченіи на Эссенту-
ковской группѣ.



Ս. Պետերբուրգի մերկնայական արդիւնագործութեան ընկերութեան ԱՄՈՒՐ, ՀԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵՆԻ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵՄԻԱՆՆԵՐԻ ԿՕՇԻԿՆԵՐ,

նոյնպէս և սկօրօթօղիներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդր-կովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԻ փաճառատներում:

Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա:

ԿԵՕՓՈՂԴ ՆԵՅՇԵԼԷՐ

Առևտրական տան պահեստում կայ ընտրութեան համար մեծ քանակութեամբ ոռոսական եւ արտասահմանեան արդիւնագործութեան

ԿԱԶՈՒԵՂԷՆԻ ԱՊՐԵՆՔՆԵՐ

Տէլէֆոն № 346. 81—40 Երևանեան հրապարակի վրա:

ԲԺԻՂԻ Ա. ՄԻԽԱՐԱՅԻԱՆԻԳ

Հնդուսում է մասնաւորապէս սիֆիլիս, մոր-թու և վնասեղան ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. Երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի, դեղա-տան կից: (տ. օ.) 34—80

Բ. ՆԱՄԱՍԱՐԴԵԱՆԻ

տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան:
Б. Садовая, 136, д. Бакалова.
(т. 4. 5.) 91—100

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Հնդուսում է յատկապէս միզանցքաւնոսական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունե-ցողներին: Հնդուսելով ժամը 10—11 ժամին առաւօտեան և 6—8 ժամին երեկոյեան: Բարձրագույն փող. № 1, «պօժարնի կօմանդի» զիմացը. տէլէֆոն № 711. (ա. օ.) 3—10

ՈՒՐԱՐԱՐ, ՄԱՐՏԻ 11-ին,

կէս օրից յետոյ ժամը 4-ին աղակաւաններին նոր կառուցվող դպրոցի գրասենեակում կա-յանալու է Վալէի առաջին խումբ հողատերե-րի ժողովը, ընկելու այդ տեղի յատկապէս: Տաշտիկով այդ մասին, Թիֆլիսի Դումայի ընտրած յանձնաժողովը խնդրում է յիշված հողատերերին շնորհ բերել յիշակ ժողովին: 8—3

Վ ա ն ա ղ ու մ ե ն
ԲԺ. Ա. ԲՈՒԴՆԻՔԱՆԻ
Երկու մօր առաւօտեան ընդունում
I
ՍԷՐ ԵՒ ԽԱՆԻ (սի պատկերով) 20 կ.
II
ԱՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ և ՊՈՒՆԿՈՒԹԻՒՆ 20 »
Դիմել՝ Թիֆլիսում «Գուտտենբերգ» և «Կեն-տրոնական» գրալստանոցները, իսկ Բազում՝ «Сотрудники» գրա-լստանոցը: 22—25

Տպագրվում է եւ մայիսի վերջերին լոյս կը տեսնէ

Լ Է Օ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐՐՈՐԴ ՀԱՍՈՐ (1878—1892), պատկերազարդ, մօտաւորապէս 600 էրես: Մինչև տը-պագրութեան վերջնայնը շարունակվում է ԲՄԺԱՆՈՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ: Երեք հասարակական 3 բուրժի, ճանապարհածախսով 4 բուրժի. կազմած՝ 4 ր., ճանապարհածախսով 5 ր. 20 կ.: Տպագրութիւնից յետոյ գինը կը լինի (անկազմ) 4 ր. 50 կօպ. առանց ճանապարհա-ծախսի:
Թիֆլիսի ՄՈՒՄ քաժանորդագրութիւն ընդունվում է միմիայն «Գուտտենբերգ» գրալս-տանոցում: Դրսից զիմում են՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ». 9—10

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Նրանց կենսը և գործերը (նմուշներով)

I Բանաւոր գրականութիւն. Գոյթան երգեր, ժողովրդական երգեր, աշուղի երգեր, Սա-յաթ-Նօվա:
II Գրականութիւն. Տառերի գրաւոր (Սահակ, Մեսրոպ):
Գրականութիւնը V դարում (Բիւզանդ, Ագաթանգեղոս, Նիկիէ, Սորենացի, Փարպեցի և այլն):
Հ. գրականութիւնը աղաքական օրգանում. Կաղանկատվացի, Յովհ. Կաթ. Թոմա Արծրու-նի, Ասողիկ. Լասարիւրացի և այլն:
Հ. գրականութիւնը մութիւնաց օրով. Բանաստեղծութիւն, պատմագրութիւն և վարդա-պետական գրութեան:
III Անկման օրգան. Բուշակ նահապետ և երգերը:
IV Վերածնունդ. Միթրաբաններ (Վենետիկ և Վենալի), Ալիշան, Պէշեքաշեան, Դուրեան, Պարոնեան, Սրուանեան, Մերենց և այլն:
Արեւիկան բաժին. Արդիւն, Նազարեան, Նազարեան, Ռ. Պատկանեան, Շահազիզ, Պոզեան, Գ. Բարսեղեան, Սուրբուկեան, Աղայեան, Լաֆֆի, Շիրվանզադէ, Մուրադեան, Լէօ, Ահարոնեան, Պարսապեան, Երեկեան, Յ. Յովհաննիսեան, Մատուրեան, Թումանեան, Բազանեան, Շահի և այլն:
Միջնակարգ դպրոցների համար կազմեց Գ. Վանցեան, գրին է 1 բուրժի, ճանապարհա-ծախսով 1 բուրժի 30 կօպէկ:
Դիմել՝ Թիֆլիս. Коммерческое учил. Ваццианъ կամ Թիֆլիսի գրալստաններին:

Բ ա զ վ ա ծ է բ ա ժ ա ն ո Ր դ ա գ ր ու թ իւ ն
Ե. Փ Ր Ա Ն Գ Ե Ա Ն Ի

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ՝ պատկերազարդ ժողովածուի

«Ատրպատական» պարունակում է իր մէջ մի շարք յօդուածներ (թուով մօտ 30—35), որոնք զանազան ժամանակներում տպագրվել են պարբերական թերթերի մէջ, մեծապէս մասը «Մուրճ» ամսագրում: Կը լինեն նաև նոր գրութիւններ, իսկ արտատպութիւններ լոյս են տեսնելու նոր սրբագրութեամբ, ընդարձակ և ճշգրտագին: Գիրքը, որ տպագրվելու է Թիֆլիսում, ու-նենալու է 450—500 էջ, մօտ 50—60 տպեր և տեսարաններ:
Բաժանորդագիրն է Ռուսաստանում 1 ր. 50 կ. Պարսկաստանում 1 թուման, իսկ ար-տասահմանում 5 ֆրանկ. քաժանորդագիրը կանխել է. լոյս տեսնելուց յետոյ գրքի գի-նը կարող է զգալի կերպով բարձրանալ:
Բ ա ժ ա ն ո Ր դ ա գ ր ու թ իւ ն ը ը ն դ ու ն վ ու մ է.
Ռուսաստանում. ա) Թիֆլիսում—«Հերմէս» տպարանում. բ) Բազում—պ. Տիգրան Ռա-ժանեանի մօտ. գ) Երևանում—պ. Մարգար-Օհանջանեանի մօտ. դ) Րօստով Դոնի վրա—պ. Ջաբար Ռուստամեանի մօտ (В. Садовая № 174). ե) Բաթում—պ. Սող. Յարութիւնեանի մօտ:
Պարսկաստանում. ա) Թեհրանում—պ. Յաթի Սալաստիեանի մօտ (ուսուցիչ). բ) Թա-բրիզում—պ. Գ. Ա. Բաբայեանի և Յովհէփ Յովհաննիսեանի մօտ. գ) Մալմաստում—հեղինակի մօտ:
Արտասահմանում. ա) Եգիպտոսում—գօլմօր Կ. Փաշայեանի մօտ (Ալեքսանդրիա). բ) Ա-մերիկա—«Հայրենիքի» խմբագրատանը (Boston). գ) Բոլդարիա—«Շարժում» խմբագրատանը (Varna): 12—20

Լոյս է տեսել և փաճառվում է

Դ Օ Ա Յ Կ

«ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ»

Դիմել և 40 կօպէկ

Դիմել Թիֆլիս—«Գուտտենբերգ» գրալս-տանում: Առնուազը 5 հատ ցանկացողը կարող է դիմել հեղինակին, «Մշակ»-ի խմբագրութիւն:

Մի ընտանիք ցանկալում է ունենալ երեխաների դաստիա-րակութեան և կրթութեան համար

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ

Պայմանների մասին դիմել Թիֆլիս, Գրի-բօէլովսկայա փող. № 17 բնակ. 5.
(Ե. Ն. Կ.) 3—3

Բ ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Ա. Յ. ՔԱՐԱՆԵԱՆԻ

Հնդուսում է ներքին եւ ջղային հիւանդութիւն-ներ ունեցողներին առաւօտեան 9—12 ժամը և երեկոյեան 5—7 ժամը:
Վերամիջոցների փողոց տ. Մաքարեանի, № 13. III գիմնադրային կից (Կ. Ե. Կ.) 14—20

Բ ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Գ. Ա. ՀԱՆՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային և սիֆիլիսի բուժական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդնե-րին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան 6 ժ.—9 ժ.: Կուլիա, Սեմեովսկայա փ. № 20. (տ. Կ. Ե.) 19—30

Հայոց Դրամատիկական ընկերութեան Վար-չութիւնը պատիւ ունի յայտարարելու, որ

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՑԻ

բեմական գործունէութեան երեսնամեայ յօրէիտեմը,

որ նշանակված էր այս տարվայ ապրիլի 5-ին, յետ աճգրվում է մինչև առաջիկայ սեզօն:
12, 13, 15, 17, 20 2—2

ԱՏԱՄՆԱՐՈՑԻ

Ս. Ա. Ստեփանեան

Հնդուսում է առաւօտեան 9—2 և 5—7, վե-րամիջոցային փ. № 8.